Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 41. Աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսերը

~~1. Ընկերության աշխատակիցներին կանոնադրությամբ սահմանված կարգով կարող են տրամադրվել աշխատակցի բաժնետոմսեր, որոնք կարող են լինել հասարակ (սովորական) կամ արտոնյալ: Աշխատակցի բաժնետոմսերը տեղաբաշխվում են Ընկերության աշխատակիցների միջև՝ այդ նպատակի համար աշխատակիցների բաժնետիրացման հատուկ հիմնադրամի միջոցների հաշվին՝ Ընկերության կողմից իր բաժնետերերից հետ գնած բաժնետոմսերից:~~

~~Աշխատակցի բաժնետոմսերի մասը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:~~

~~2. Աշխատակցի բաժնետոմսը Ընկերության աշխատակցին արտոնյալ պայմաններով վաճառված անվանական բաժնետոմս է: Աշխատակցի բաժնետոմսերի շրջանառությունը կարող է սահմանափակվել կանոնադրությամբ սահմանված ժամկետով, բայց ոչ ավելի, քան երեք տարով, սկսած դրանց տեղաբաշխման օրվանից:~~

~~3. Աշխատակիցների բաժնետոմսերը տեղաբաշխվում են աշխատակիցների միջև վերջիններիս համաձայնությամբ: Աշխատակցի բաժնետոմսերի դիմաց վճարվող գումարը կարող է անվանական արժեքից ցածր լինել, բայց ոչ պակաս քսանհինգ տոկոսից:~~

1. Ընկերությունն իրավունք ունի աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի շրջանակներում թողարկել և տեղաբաշխել աշխատակցի՝ հասարակ (սովորական) կամ արտոնյալ բաժնետոմսեր, եթե կանոնադրությամբ դա արգելված չէ:

Աշխատակիցների բաժնետիրացման ծրագիրն Ընկերության ներքին իրավական ակտ է, որի համաձայն Ընկերությունն իր մեկ կամ ավելի վարձու աշխատողներին (այդ թվում՝ խորհրդի անդամներին) տրամադրում կամ պարտավորվում է տրամադրել հատուցումներ՝ Ընկերության կամ նրա մայր կազմակերպության սեփական կապիտալի գործիքներով (բաժնետոմսերով, օպցիոններով կամ սեփական կապիտալի այլ գործիքներով): Ընդ որում, աշխատակիցների բաժնետիրացման ծրագիրը Ընկերությունը կարող է իրականացնել նաև հատուկ այդ նպատակով ստեղծված ներդրումային ֆոնդի կամ այլ կազմակերպության միջոցով:

2. Աշխատակցի բաժնետոմսը Ընկերության աշխատակցին արտոնյալ պայմաններով տրամադրվող անվանական բաժնետոմս է: Փակ Ընկերության աշխատակցի բաժնետոմսերի շրջանառությունը կարող է սահմանափակվել կանոնադրությամբ կամ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով սահմանված ժամկետով: Բաց Ընկերության աշխատակցի բաժնետոմսերի շրջանառությունը կարող է սահմանափակվել ոչ ավելի քան երեք տարով, սկսած դրանց տեղաբաշխման օրվանից:

3. Աշխատակիցների բաժնետոմսերը տեղաբաշխվում են աշխատակիցների միջև վերջիններիս համաձայնությամբ: Աշխատակցի բաժնետոմսը կարող է տրամադրվել անվճար կամ դրա դիմաց վճարվող գումարը կարող է անվանական արժեքից ցածր լինել: Աշխատակցի հետ աշխատանքային հարաբերությունների ընթացքում Ընկերությունը կարող է ձեռք բերել աշխատակցի բաժնետոմսերը կամ դրանց մի մասը՝ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով սահմանված կամ դրանով որոշվող գնով:

4. Աշխատակցի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման դեպքում, բացի կենսաթոշակի անցնելու դեպքերից, Ընկերությունը նախապատվության իրավունք ունի հետ գնել աշխատակցի բաժնետոմսերը շուկայական գնով, սակայն անվանական արժեքից ոչ պակաս կամ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով սահմանված կամ դրանով որոշվող գնով:

Աշխատակցի բաժնետոմսերի մահացած տիրոջ ժառանգորդները, եթե գործում են սույն հոդվածի 2-րդ կետում նշված սահմանափակումները, իրավունք ունեն Ընկերությունից պահանջել դրանց հետգնումը շուկայական գնով, սակայն ոչ պակաս անվանական արժեքից, կամ պահանջել դրանք փոխարկել Ընկերության այլ բաժնետոմսերի, եթե այդպիսիք հայտարարված են Ընկերության կողմից:

5. Աշխատակցի բաժնետոմսի սեփականատերերը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետով նշված սահմանափակման, օգտվում են նույն իրավունքներից, ինչպիսիք սահմանված են սույն օրենքով և կանոնադրությամբ՝ դրանց համապատասխանող հասարակ (սովորական) կամ տարբեր դասերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի համար:

Աշխատակցի բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է տարբերվի Ընկերության հասարակ (սովորական) և համապատասխան դասի արտոնյալ արժեթղթի անվանական արժեքից:

6. Աշխատակիցների բաժնետոմսերի տեղաբաշխման, դրանց դիմաց վճարման և աշխատակիցների արտոնությունների սահմանման կարգի մասին որոշումը կայացնում է ժողովը: